ИСТОРИЯ

Հայկական զորքի մասնակցությունը Թավրիզի պաշտպանությանը (1724 թ. սեպտեմբեր)

Այվազյան Արմեն Մ.
պ. գ. թ., ք. գ. դ., ավագ գիտաշխատող, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Երևան, ՀՀ)
https://orcid.org/0009-0003-2724-7695
armenayvazyan@gmail.com

ՀՏԴ՝ 94 (479.25, 55); **EDN:** EHTDSH;
DOI: 10.58587/18292437-2024.3-19
Հանգուցաբառեր՝ Թավրիզի պաշտպանություն, 1724 թ., Հայոց Սղնախներ, Ղարաբաղ, Դիզակ, ենիչերիներ, ղուլեր, Թահմասպ Բ, Փարսադան-բեկ, մելիք Եգան, Փիլիբեկ Բասաուրով

Участие армянского войска в обороне Тебриза (сентябрь 1724 г.)

Айвазян Армен М.
к. и. н., д. п. н., старший научный сотрудник, «Матенадаран» — Научно-исследовательский институт древних рукописей имени Месропа Маштоца (Ереван, РА)

Аннотация. Впервые на основе тщательного анализа исторических материалов исследуется участие армянских отрядов в обороне Тебриза в 1724 году. В 1723-1724 гг. османские армии с нескольких направлений вторглись в Сефевидксий Иран. В сентябре 1724 г. одна из этих армий под командованием ванского Абдулла-паши приблизилась к Тебризу и предприняла попытку штурма.
В последовавшей битве турки были разгромлены и отброшены от города, потеряв около 20 000 солдат убитыми. Согласно ряду европейских источников, важную роль в этой крупной победе — единственной для персидских войск за всю кампанию 1724 года — сыграли армянские воинские подразделения, участвовавшие в битве за Тебриз и большей частью прибывшие из Карабаха. В частности, именно армяне фактически истребили почти весь элитный корпус янычар в армии Абдулла-паши. В статье выявляются армянские отряды, участвовавшие в обороне Тебриза, и поименно называются их командиры: Парсадан-бек, Мелик-Еган, Пилибек Басауров, Давид, Абиджан, Агаджан, Ахназар, Балиг и другие.
Ключевые слова: Оборона Тебриза, 1724 г., Армянские Сагнаки, Карабах, Дизак, янычары, гулы (гулями), Тахмасп II, Парсадан-бек, Мелик-Еган, Пилибек Басауров

The Role of Armenian Forces in the Defense of Tabriz (September 1724)

Ayvazyan Armen M.
Doctor of Political Science,
“Matenadaran” Mesrop Mashtots Scientific Research Institute of Ancient Manuscripts (Yerevan, RA)

Abstract. This study delves into the hitherto unexplored involvement of Armenian troops in the defense of Tabriz in 1724, drawing on an extensive analysis of historical materials. In 1723-1724, the Ottoman Empire launched invasions into Safavid Iran from several directions. By September 1724, one Ottoman army, led by Abdullah Pasha of Van, advanced towards Tabriz and attempted to storm the city. During the ensuing battle, the Turkish forces were soundly defeated and driven back, suffering approximately 20,000 casualties. European sources emphasize the significant role played by Armenian military units in the decisive victory at the Battle of Tabriz, the sole triumph for Persian forces during the 1724 campaign. Notably, the majority of these units arrived from Karabakh. The Armenian troops were instrumental in virtually annihilating the elite Janissary corps within Abdullah Pasha's army. This article identifies the Armenian detachments involved in the defense of Tabriz, listing their commanders: Parsadan-bek, Melik-Egan, Pilibek Basaurov, David, Abidjan, Aghajan, Akhnazar, Balig, among others.
Key words: Defense of Tabriz, 1724, Armenian Sagnaks, Karabakh, Dizak, Janissaries, Ghilman (*sngl*: ghulam), Tahmasp II, Parsadan-bek, Melik-Yegan, Pilibek Basaurov

1720-ական թվականներին Հայաստանի արևելյան՝ Սեֆյանների տիրապետության տակ գտնվող մասում, ազգային-ազատագրական ծրագրով, պատմական թատերաբեմ է իջնում տասնյակ հազարավոր մարտիկներից բաղկացած նորաստեղծ հայկական զինուժը: 1722 թվականին ուղղակի բախման մեջ մտնելով Սեֆյան տերության տեղական ուժերի դեմ՝ հայկական զորքերն Արցախում և Սյունիքում հիմնեցին փաստացիորեն լիովին անկախ ազգային իշխանապետություններ: Իսկ քիչ ավելի անց՝ 1724-1735 թվականներին, Արցախն

ու Սյունիքը դարձան Սեֆյան Իրան (ներառյալ Այսրկովկաս) ներխուժած օսմանյան բանակների դեմ կատաղի զինված դիմադրության գլխավոր օջախներից մեկը: Օսմանյան ռազմակալման դեմ պայքարում հայկական նորաստեղծ զորքերը դաշնակցեցին իրանական-շիական ուժերի հետ, որոնք 1720-ականներին գործում էին Սեֆյան վերջին տիրակալ շահ Թահմասպ Բ-ի (1723-1732) դրոշի ներքո հիմնականում Գանձակի, Թավրիզի, Գիլան և Մազանդարան նահանգներում, մինչդեռ Իրանի կենտրոնական շրջաններն ու մայրաքաղաք Սպահանը 1722 թ. ի վեր գրավված էին աֆղանական զավթիչների կողմից:

Թավրիզը 1690 թվ.. ուրվագիծը՝ Ժակ Պեյետերսի (Jacques Peeters, 1637-1695)

1724 թվականին շահ Թահմասպ Բ-ին (1723-1732) ենթակա ուժերի միակ խոշոր ռազմական հաջողությունը՝ սեպտեմբերին Թավրիզում՝ Վանի Աբդուլահ Քյոփրուլու փաշայի գլխավորությամբ գործող օսմանյան բանակին [**26**, էջեր 262-263] պարտության մատնելն էր ու քաղաքի մատույցներից հետ շպրտելը: Այդ նշանավոր հաղթանակի ձեռքբերմանը, եվրոպական մի շարք աղբյուրների համաձայն, մեծապես նպաստել են հայկական զորամասերը, որոնք Թավրիզի ճակատամարտում ծանր կորուստներ են պատճառել օսմանցիներին՝ փաստորեն, գրեթե բնաջնջելով նրանց ընտրելագույն ենիչերական զորագունդը: Այսպես, մինչև 1725 թ. հունիսի սկիզբը Սպահանում գտնվող և, ըստ այդմ, նախորդ տարվա այդ դեպքերին քաջատեղյակ լեհ ճիզվիտ Թ. Կրուշինսկին, գրում էր.

«Թահմասպ արքայազնը, բարեբախտաբար, հենց նոր էր վերջ տվել իր կողմը բռնած տարբեր ուժերի միջև ներքին պառակտումներին: Նա մեղմ վարքագծով սիրաշահել էր նրանց, ում մինչ այդ իր անպատեհ գոռոզությամբ զզվանք էր պատճառել: Հատկապես Կապանի լեռների հայերի նրան միանալու շնորհիվ այնպիսի կացություն ստեղծվեց, որ նա ի վիճակի եղավ ոչ միայն հաջող դիմադրություն ցույց տալ թուրքերին, այլև գրոհել նրանց ամրոցները: Հենց այդպես էլ նա վարվեց, ընդ որում՝ այնպիսի եռանդով, որ ձեռքբերեց ամենափառահեղ և լիակատար հաղթանակներից մեկը, որ գրանցվել էին պարսկական խժդժությունների սկզբից ի վեր (իմա՝ 1722 թ. ի վեր – **Ա. Ա.**), որովհետև 20,000 թուրք կոտորվեց [Թավրիզի] ճակատամարտում և գրեթե նույնքան էլ գերի ընկավ»:

[*Happily for Prince Thamas, he had just put an end to the domestic dissentions among his party, and by his mild behaviour gained over those whom his unseasonable pride had disgusted; especially the Armenians of the mountains of Capan, who by joining him, put him in a condition, not only to make head against the Turks, but also to attack them in their intrenchments: which he did, and with so much vigour, that he obtained one of the most glorious and compleat (sic) victories that had been known since the beginning of the Persian troubles, for there were 20,000 Turks slain in the battle [of Tabriz] and almost as many taken prisoners.*] [**25**, էջ 141].

Մեկ այլ առիթով Կրուշինսկին դարձյալ նշում է, թե «որևէ մեկն այդքան չնպաստեց Թավրիզի մոտ թուրքերի պարտությանը, քան նրանք (հայերը)» [«None had contributed more than they to the defeat of the Turks before Tauris»]՝ ավելացնելով, որ Թավրիզի ճակատամարտում օսմանցիների ընտրելագույն ենիչերական գվարդիայից «հայերը գեթ մեկ հոգու չխնայեցին» [«the Armenians spar'd none»] [**25**, էջ 178]: Ենիչերիների նկատմամբ այդպիսի անողոք վերաբերմունքը պայմանավորված էր, ըստ երևույթին, նրանց մինչ այդ դրսևորած և պատմականորեն հանրածանոթ արյունոշտությամբ ու վայրագություններով[1]: Կրուշինսկու հաղորդումը երկրորդում են Օտտերն ու Մամի-Կլերակը [**23**, էջեր 164-165; **27**, էջ 232], իսկ դը Սագրեդոն լրացնում է այն հետևյալ ուշագրավ դիտարկմամբ՝ «թուրքերը հանդգնեցին երկրորդ անգամ (իմա՝ 1725 թ. – **Ա. Ա.**) պաշարել Թավրիզը միայն այն բանից հետո, երբ տեղեկացան, որ նրանք (հայերը) չեն մասնակցում [քաղաքի պաշտպանությանը]»[2]:

[1] Ենիչերիների դաժանություններն ու նենգությունը բազմիցս են արձանագրվել պատմական աղբյուրներում (տե՛ս, օրինակ, [**22**, էջեր 213-214]): Ենիչերիները հայտնի էին նաև քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի և հույների նկատմամբ իրենց կրոնական անհանդուրժողականությամբ ու բռնություններով [**20**, էջեր 243-244] :

[2] Տե՛ս [**9**, էջ 98; 22, էջեր 345-346]: 1720-ական թթ. կեսերից ի վեր Սյունիքի և Արցախի հայկական զինուժն իր մարտական կարողություններով ավելի բարձր համարում ուներ օսմանյան հրամանատարության մոտ, քան Սեֆյանների կազմաքանդված բանակի բեկորներից շատերը: Այսպես,

Թավրիզում օսմանյան բանակի ծանր պարտությունը հաստատում են նաև ուրիշ աղբյուրներ: Թավրիզի թաղամասերից մեկում կռվով փոքր-ինչ խորանալուց հետո օսմանյան զորքը ենթարկվում է կատաղի հակահարձակման[3], որի ընթացքում **4000 օսմանցի զինվոր կոտորվում են «մինչև վերջին մարդը»** [**26**, էջ 263]: Դատելով այս վերջին պարզաբանումից, խոսքը վերաբերում է ենիչերիների զորագնդի ոչնչացման նույն այն դրվագին, որի մասին հայտնում էր Կրուշինսկին, ըստ այդմ՝ հայկական զորաջոկատները հենց այս մարտում են իրենց լավ դրսևորել: Օսմանցիների զորքի մյուս մասը, այնուամենայնիվ, ճեղքել է շրջափակումը և նահանջել քաղաքից մատույցներում գտնվող իր դաշտային ճամբարը Մի քանի օր անց Թավրիզում մնացած պարսկական զորքը, որ գործում էր Մուստաֆա-խանի ընդհանուր հրամանատարության ներքո, արտագրոհ է ձեռնարկել և օսմանցիներին հետ շպրտել մինչև Խոյ[4]: Թավրիզի ճակատամարտում պարսից ուժերի գլխավոր հրամանատարը եղել է Մուստաֆա խանը, իսկ Թահմասպ Բ-ն այդ ժամանակ գտնվել է Արդեբիլում՝ լրացուցիչ զորաջոկատներ հավաքագրելու և Թավրիզի պաշտպաններին օգնության ուղարկելու նպատակով [**26**, էջ 263-264, (ծնթ. 2)]:

Ստորև ճշտվելու են այն հայկական զորամիավորներն ու նրանց հրամանատարները, որոնք, առավել հավանականորեն, իրենց մասնակցությունն են բերել Թավրիզի 1724 թ. պաշտպանությանն ու վերոհիշյալ ռազմագործողությանը: Սկզբից ևեթ պետք է նշել, որ այդ հայկական ուժերը չէին կարող ժամանել Դավիթ-բեկի հիմնած Սյունյաց (Կապանի/Ղափանի) իշխանապետությունից, որովհետև Ստեփանոս Շահումյանի, Տեր-Ավետիքի և «Ղափանցվոց պատմության» մյուս լրատուների մանրամասն հաղորդումներից հստակ երևում է, որ 1724 թ. այդպիսի զարգացումն անհնար էր: Ճիշտ է, Սյունյաց ազատամարտի այս հիմնական սկզբնաղբյուրը գրեթե ոչինչ չի հաղորդում 1724 թ. սեպտեմբերից մինչև 1725 թ. ընկած ժամանակահատվածի մասին, բայց 1724 թ. գարնանը կապանցիների կրած մեծ կորուստները (միայն մարտի վերջին-ապրիլի սկզբին՝ շուրջ 5500 նահատակված մարտիկ) [**5**, էջեր 506, 560], ինչպես նաև ամռանն օսմանյան բանակի Արարատյան երկրում ու Նախիջևանում հայտնվելն արդեն իսկ բացառելու էին Ղափանից մեծաթիվ հայկական ուժերի դեպի Թավրիզ հեռավոր մարտարշավը[5]:

Հետևաբար, շատ ավելի հավանական է, որ Թավրիզի պատերի տակ օսմանցիների դեմ մարտնչել են ոչ թե Սյունիքից, այլ Արցախից ժամանած հայկական զորաջոկատները, իսկ Կրուշինսկին և նրան երկրորդած եվրոպացի հեղինակները սխալմամբ այդ կռիվները սյունեցիներին (կապանցիներին) են վերագրել, քանի որ XVII–XVIII դարերում Ղափան տեղանունը բազմանշանակ էր՝ իր լայնիմաստ կիրառությամբ այն երբեմն ներառում էր Կուր և Արաքս գետահովիտների միջև ընկած ամբողջ լեռնաշխարհը[6]:

1. Փիլիբեկ Շերգիլի Բասաուրովի զորագունդը

1754 թ. ռուսական բանակի փոխգնդապետ, թիֆլիսեցի Փիլիբեկ Շերգիլի Բասաուրովը՝ Ելիզավետա կայսրուհուն հղած խնդրագրում վկայակոչելով իր մոտ գտնվող Թահմասպ Բ շահի երկու հրովարտակները, վերհիշում էր 1723 թվականին իր հրամանատարության տակ գտնվող հայկական զորագնդի կողմից 17,000-անոց օսմանյան բանակի ոչնչացումն «Արարատի մոտակայքում», որտեղ սպանվել է նաև նրանց հրամանատար Ումար (Օմար) փաշան. «*...сигнатцские армяна мною против турок возмущены и в 1723-м году под Араратом имели мы с турецкой армиею баталию, на которой со семнатцать тысяч турок побили, причем и главной их сераскер Умар паша убит*» [**19**, վավ. 112, էջ 289]:

Բասաուրովի համաձայն, «Սղնախների հայ ժողովրդի» մոտ («к сигнацкому армянскому народу») իրեն ուղարկել է Քարթլիի արքա

Տեր-Ավետիքի արժանահավատ տեղեկությունների համաձայն, 1727 թ. Օրդուբադի մոտ օսմանյան բանակը, կարծելով, թե քաղաքին մոտեցած զինուժը պարսկական է, դիմում է հարձակման, սակայն առաջին բախումից հետո հասկանալով, որ դիմացը կանգնած է անձամբ Դավիթ-բեկի գլխավորած հայկական զորագունդը, իսկույն ևեթ փախուստի է դիմում ([**6**, էջ 139]; հմմտ. [**5**, էջ 472-473]):

[3] Քաղաքի ներսում թշնամուն անսպասելի հակագրոհելու նման մարտավարություն կիրառվել էր նաև 1721 թ. Գանձակում՝ կովկասյան լեռնականների հարձակման ժամանակ. *«Այլեւ ի ՌՃՀ թուին նոյն ինքն Ալի սուլդանն գումարեալ ի վերայ ինքեան զօրս նոյն ազգէն Լազկացն թուով ոչ սակաւք քան զուր հազար, եկն ի վերայ քաղաքին Գանջայու մինչեւ եմուտ ի պողոտայն (այսինքն Քուչան) որ ի կողմն Սուլթօքուլան անուն գեղջն, թոյլ տալով քաղաքացւոցն: Եւ յորժամ մտին ի ներսն, ապա յարեան քաղաքացիքն, եւ կալան աստի եւ անտի զանցս զնացից նոցա, եւ կոտորեցին ի նոցանէ մինչեւ ի հազար քսան եւ մի ոգիս աւելի կամ պակաս, եւ ոչ ինչ կարացին առնել. այլ յետս դարձեալ ամօթով զնացին ի տեղիս իւրեանց»* [**8**, էջ 24]:

[4] 1724 թ. Թավրիզի պաշտպանության ընդհանուր ընթացքն ու կարևոր մանրամասները ներկայացրել է Լ. Լոքհարթը՝ թեև հայերի մասնակցությունն այդ կռիվներին չհիշատակելով (տե՛ս [**26**, էջեր 262-264]):

[5] Չնայած 1724 թ. օգոստոսին Մեղրիի հայերի և Օրդուբադի շիական ուժերի միջև, սիփահսալար Մանսուր-խանի միջնորդությամբ, հաշտություն էր կնքվել, շատ շուտով Թահմասպ Բ-ն դարձյալ թշնամական դիրքորոշում էր ընդունել Դավիթ-բեկի իշխանապետության դեմ [**3**, էջեր 106-107] :

[6] Ղափան եզրույթի մասին տե՛ս [**10**, հ. Բ, էջեր 230-238; **2**, էջեր 128-129]:

Վախթանգ Զ-ն[7], իսկ օսմանցիների դեմ այդ ճակատամարտն ինքը տվել է «սղնաղցի հայերի» գլուխն անցած: Եթե նկատենք, որ «Սղնախ» կամ «Սղնախներ» եզրույթը գրեթե միշտ օգտագործվում էր Ղարաբաղի հայոց զորքի իմաստով, ապա պետք է կարծել, որ նրա հրամանատարության տակ գտնվող զորագունդը բաղկացած է եղել Ղարաբաղում կազմավորված հայկական ստորաբաժանումներից: Փիլիբեկ Բասաուրովը նույն այն Փիլիպն է (ռուսերեն վավերագրերում՝ Филипп), ով 1724 թ. հիշվում է որպես շահ Թահմասպի մոտ ուղարկված պատվիրակ: 1725 թ. մարտին նա արդեն վերադարձել էր Ղարաբաղ՝ շահ Թահմասպից Սղնախի հայ հրամանատարությանն ուղղված խրախուսիչ հատուկ մի հրովարտակ ու թանկարժեք նվերներ իր հետ բերելով: Այդ մասին էին 1725 թ. մարտի 10-ին Վախթանգ Զ-ին հայտնում Գանձասարի Եսայի կաթողիկոսը և Ղարաբաղի զորահրամանատարներն ու մելիքները.

> «Փիլիպը դարձյալ մեկնեց շահի մոտ՝ [այս անգամ] գանձակեցիների և մեր միջև [1724 թ. մարտին ստորագրված] փաստաթղթերով, և ահա նոր վերադարձավ՝ նրանից մեզ համար բերելով [պատվավոր] խալաթ և [դրվատական] հրովարտակ»
>
> [*«Դարձեալ Փիլիպն գանջցոց և մեր թղթովն գնաց շահին մօտն, հիմա եկաւ խալաթով, ըռաղամով մեզ համար, այլև Քալպալի պէկն այս բանիս վերայ բերինք մեր մէջս, ղզլպաշին (իմա՝ պարսկամետ շիա ուժերի – Ա.Ա.) հետ հաշտեցինք…»*] [**18**, վավ. 310, էջ 236]:

Բասաուրովը վստահելի կապավորի դեր է կատարել նաև Վախթանգ Զ-ի ու Սղնախների ղեկավարության միջև. նույն նամակում վերջիններս գրում են, թե՝ «Փիլիպին գալովն զամենայն որպիսութիւն գրեալ եմք առ ձեր մեծութիւնդ» [**18**, վավ. 310, էջ 235; հմմտ. վավ. 304, էջեր 220-222]: Այսպիսով փաստվում է նաև Բասաուրովի այն հաղորդումը, որ իրեն Սղնախներ է ուղարկել Վախթանգ Զ-ն:

Անկասկած, Փիլիբեկ (Փիլիպ) Բասաուրովն իր հետ Թահմասպի մոտ էր տարել Ղարաբաղի Սղնախների և Գանձակի մահմեդական ղեկավարության միջև՝ 1724 թ. մարտին կնքված «փոխօգնության» պայմանագիրը, որն ուղղված էր օսմանցիների և նրանց դաշնակից Կովկասի լեռնականների դեմ:

17,000-անոց օսմանյան զորքին հաղթելու մասին իր պատմությունը Բասաուրովը վերագրել է 1723 թվականին, բայց մի քանի հանգամանք (ճակատամարտի ժամանակը, վայրը և օսմանյան կորուստների թիվը) հուշում են, որ այն կարող է վերաբերել 1724 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Թավրիզի ճակատամարտին:

Թավրիզի ճակատամարտում, ըստ Թ. Կրուշինսկու և վերոհիշյալ մյուս եվրոպական աղբյուրների, օսմանցիների ընդհանուր կորուստները կազմել են շուրջ 20,000 զինվոր: Այս թիվը և Բասաուրովի նշած 17,000 օսմանյան բանակի ջախջխումը միմյանց բավականին մոտ են: Բասաուրովն ինչ-ինչ պատճառներով ճակատամարտի վայրը նշել է առաձգականորեն՝ «Արարատի մոտակայքում», որն առնվազն հուշում է օսմանյան բանակի հենց Թավրիզի ուղղությամբ արշավանքը: Ժամանակի մեկ տարով տարբերությունն ուղղվում է, եթե նկատենք, որ Փ. Բասաուրովն իրադարձությունների հաջորդականությունն սխալմամբ մեկ տարով վաղ է նշել նաև Քարթլիի նախկին արքա (1716-1724 թթ.) Վախթանգ Զ-ի (1675-1737) Գիլան ժամանումը (դրա հետ կապված նաև իր՝ Բասաուրովի, ռուսական բանակի ծառայության մեջ անցնելը). այդ դեպքերը նա սխալմամբ թվագրել է 1725 թ., այնինչ Վախթանգը ժամանել էր այնտեղ 1726 թ. սեպտեմբերի 10-ին [**16**; **21**, էջ 101]: Այսինքն՝ 30 տարվա վաղեմություն ունեցող դեպքերը Բասաուրովը կա՛մ մոռացության պատճառով, կա՛մ միտումնավոր կերպով մեկ տարով շուտ է նշել:

«Արարատի մոտակայքում» տեղի ունեցած ճակատամարտից հետո Բասաուրովը (իր ասելով՝ 1724 թ.) 50-հոգանոց ջոկատով մեկնել է Մազանդարան՝ Թահմասպ II-ի մոտ, որտեղ և գտնվել է, ինչպես տեսանք, մինչև 1725 թ. սկզբները (ամենաուշը՝ մարտը): Հետաքրքիր է, որ Փ. Բասաուրովի որդին նույն դրվագը պատմելիս, նշում է, որ այդ հաղթանակից հետո իր հայրը մեկնել է այցելելու Թահմասպին ոչ թե Մազանդարան, այլ Թավրիզ [**19**, վավ. 167, 168, էջեր 403, 407]: Ավելին, նմանատիպ որևէ այլ ճակատամարտ սկզբնաղբյուրներից մեզ հայտնի չէ ոչ 1723, ոչ էլ 1724 թվականին: Թվում է, թե 1754 թ. իր խնդրագիր-զեկուցագրում Բասաուրովն ինչ-որ փաստեր է թաքցրել իր գործունեությունից և, հնարավոր է, հենց այդ պատճառով էլ ճակատամարտը 1724 թ. փոխարեն 1723-ով է թվագրել: Այսպես, այդ զեկուցագրում նա գրում է, թե շահի մոտից նա մեկնել է ուղիղ Գիլան, հետագայում Ղարաբաղ մեկնելու մտադրությամբ, սակայն սպասել է Վախթանգի գալուն և այդպես էլ Ղարաբաղ չի գնացել [**19**, վավ. 112, էջ 289]: Այնինչ 1724 թ.

[7] 1722 թ. հունիսին շահ Սուլթան-Հուսեյնը Վախթանգ Զ-ին շնորհել էր Այսրկովկասում և հյուսիսային Իրանում եղած պարսից ուժերի գլխավոր հրամանատարի՝ «Ատրպատականի/Ադրբեջանի սարդարի» պաշտոնը, որից էլ օգտվելով, հայ-վրացական ուժերն ազատագրական նպատակներով նախաձեռնեցին լայնածավալ զորահավաքային միջոցառումներ, որոնց թվում էր նաև վրացական բանակում ծառայող հայ փորձառու զորահրամանատարներից շատերին Արցախ ու հատկապես Սյունիք գործուղելը (այս մասին տե՛ս [**4**; **5**, էջեր 464-489]):

մարտի 10-ին Ղարաբաղում գրված վերոհիշյալ նամակից մենք գիտենք, որ նա այդ պահին արդեն Ղարաբաղում էր ու, չի բացառվում, նաև մասնակցել էր 1725 թ. մարտի 3-ին օսմանյան կորպուսը ոչնչացնելու գործողությանը: Ամեն դեպքում, Բասաուրովի ջոկատի 1724 թ. գարնանից մինչև 1725 թ. սկզբները Թահմասպի զորքերում գտնվելն անկասկած է: Այս դրվագի վրա կարող են որոշակի լույս սփռել Շահ Թահմասպի՝ Փիլիբեկ Բասաուրովին շնորհված զույգ հրովարտակները, որոնք պահվում են Մոսկվայի Պետական կենտրոնական ռազմապատմական դիվանում[8]: Դիվանային վավերագրերը տեղեկացնում են, որ 1726 թ. Փիլիբեկ Բասաուրովն անցել է ծառայության ռուսական բանակում և ստացել պորու(տ)չիկի, 2-3 տարի անց՝ կապիտանի, 1733 թ.՝ մայորի, 1745 թ.՝ փոխգնդապետի կոչում՝ 1726-1728 թթ. գլխավորելով 50-հոգանոց, իսկ 1728-1735 թթ.՝ 100-150-հոգանոց ջոկատ (մահացել է 1756 թ. սեպտեմբերի 14-ին) [**19**, վավ. 64, 67, 112, 167-168, էջեր 212, 218, 288-292, 405, 408, 450]:

2. Փարսադան-բեկի 300-հոգանոց ընտիր զորաջոկատը

Ուրիշ ի՞նչ հայկական զորք կարող էր մասնակցած լինել 1724 թ. Թավրիզի ճակատամարտին: Մյուս հավանականությունը (որ չի բացառում Բասաուրովի զորաջոկատի մասնակցությունը Թավրիզի ճակատամարտին) այն է, որ հյուսիսային Իրանում Թահմասպ Բ-ի ենթակայության տակ ի սկզբանե, այսինքն՝ 1722 թվականից ի վեր, կային հայկական որոշակի զորաջոկատներ և զորահրամանատարներ: Նրանցից մեկը *գեղալիբեկի* զինվորական բարձր պաշտոնում հիշատակվող թիֆլիսեցի Փարսադան-բեկն էր՝ Դավիթ-բեկի աները, ում անմիջական հրամանատարության տակ պետք է լիներ այն «հայ յուզբաշին» (շատ հավանաբար, իր որդիներից մեկը՝ Ռափայելը կամ Թաղին), ով այդ պահին գլխավորում էր Թահմասպի 300 «վրաստանցիներից» բաղկացած «ամենաընտիր զորաջոկատը», որը, ըստ հայ հետախույզ Ապելի, բաղկացած էր 300 վրաստանցիներից և 25 դերբենդցիներից». «*А лутчее войско грузинцов человек с 300, дербенцов 25, с юзбашею армян*» [**19**, վավ. 3, էջ 100]: Ինքը Փարսադան-բեկը նույնպես «վրաստանցի» (*грузинец*) է անվանված. «…*Парсадим бекове, сие грузинце которой в шахове службе в чину гедалибек обретается*» [**19**, վավ. 3, էջ 101]: Բանն այն է, որ XVII–XVIII դարերում վիրահայերին հաճախ էին «վրացի» կոչում՝ վրաստանցի հայ (Վրաստանի հայ, վիրահայ) իմաստով: Այսպես, Դավիթ-բեկի զորքում «վրացի» մականունով հիշվող հայ զորահրամանատարների («վրացի Յոհաննէս», «Պայինտուր իշխանն վրացի») կապակցությամբ վենետիկյան մխիթարյանները հարկ էին համարել հատուկ պարզաբանում ստանալ իրենց լրատու Տեր-Ավետիքից. *«արդ սոքա Վրացի ասին, ըստ որում էին յերկրէն Վրաց, այլ ոչ եթէ էին ի Վրաց ազգէն, վասն զի Դաւիթ եւ ամենայն զօրավարք եւ զօրքն իւր էին ի յազգէ Հայոց»* [**6**, էջ 143]: Նույն փաստը Ղուկաս Սեբաստացին շեշտում է նաև մեկ այլ առիթով. *«Այս Դաւիթ Պէկն էր… ազգաւ հայ ինքն եւ ամենայն հետեւողք իւր»*[9]: Բնականաբար, վերոհիշյալ 300 «վրաստանցի» զինվորականների առնվազն կեսը, եթե ոչ մեծամասնությունը, բաղկացած էր վիրահայերից, գոնե երկուսին գիտենք անվանապես՝ դրանք Փարսադան-բեկի որդիներն էին՝ Ռափայելն ու Թաղին [**7**, վավ. 117, 136, 163, էջեր 224, 248, 287], որոնք քիչ անց՝ 1724 թ. վերջին, լքել են Սեֆյանների ճամբարը և անցել ռուսական ծառայության՝ հիմնելով այսպես կոչված «Վրացական էսկադրոնը»՝ Грузинский эскадрон (шквадрон): Ընդ որում՝ այդ էսկադրոնում ծառայողների մեծամասնությունը դարձյալ վիրահայերն էին[10]:

Ամեն դեպքում, Փարսադան-բեկի և վրաստանցիների 300-հոգանոց «ընտիր զորաջոկատի» մասնակցությունը Թավրիզի ճակատամարտին կարելի է համարել բավականին հավանական: Փարսադան-բեկի մասին պահպանված վերջին տեղեկությունն այն է, որ

[8] Հ. Խաչատրյանը նշում է, որ պարսկերեն բնօրինակները ռուսերեն թարգմանության հետ միասին պահվում են հետևյալ դիվանում՝ [**17** (տե՛ս [**19**, էջ 453, ծնթ. 117])]: Սակայն, 1990 թ. սեպտեմբերին մոսկովյան այդ դիվանում աշխատելիս նշված համարակալմամբ նման վավերագրեր չկային: Ժամանակի սղության պատճառով պրպտումները չկարողացանք շարունակել:

[9] Լրացուցիչ պատմական տեղեկություններ վիրահայերին «վրացի» (=վրաստանցի) կոչելու մասին կարելի է գտնել հետևյալ ուսումնասիրություններում՝ [**12**, էջ 25, ծնթ. 88: **13**, էջ 184, ծնթ. 231]: Տե՛ս նաև [**5**, էջ 471 (ծնթ. 1199)]:

[10] [**19**, էջեր 86, 363-375 (վավ. 153)]. Եթե XVII–XVIII դարերում «վրացի» եզրույթը վիրահայ իմաստով կիրառելը սովորական ու տարածված երևույթ էր, ապա մեր ժամանակներում այդ պատմական իրողությանն անծանոթ լինելը, բնականորեն, կարող է շփոթմունքի տեղիք տալ: Այսպես, անգլիացի պատմաբան Լորենս Լոքհարթը, իմանալով Թիֆլիսում ծնված մի հետաքրքրահարույց գործչի՝ Հովսեփ Ապիսալայմյանի հայ լինելու մասին, խիստ զարմանք է արտահայտում, որ նա ինքն իրեն «վրացի» է կոչել: Այս փաստն ու Հովսեփի գրություններից մեկում ազգանվան բացթողումը Լոքհարթի միտքը տարել են հետևյալ փակուղային դեգերումների. «Նա (Հովսեփ Ապիսալայմյանը) ինքն իրեն վրացի էր համարում, ենթադրաբար, որովհետև ծնվել էր Թիֆլիսում: Սակայն անհասկանալի է մնում, թե նա ինչու՞ էր իր ակնհայտորեն հայկական ազգանունը զանց առել: Արդյոք վրացի լինելու իր հավակնությանն այդպե՞ս սատարելու համար: Բայց այդ դեպքում նա պետք է ստիպված լիներ հորինել մի որևէ հարմար ազգանուն, իսկ նա դա չի արել» [**26**, էջ 508]: Հովսեփ Ապիսալայմյանի մասին Լոքհարթի հոդվածը տե՛ս նույն տեղում [**26**, էջեր 504-510]:

նա մահացել է Արդեբիլում և այնտեղ էլ հուղարկավորվել է [**19**, վավ. 79, էջեր 237-238]: Այդ դեպքը տեղի է ունեցել, ամենայն հավանականությամբ, 1724 թ. երկրորդ կեսին, այլապես նրա որդիները հազիվ թե 1724 թ. վերջերին հեռանային իրանական բանակից և անցնեին ռուսական ծառայության մեջ՝ իրենց հորն այդ բացահայտ դասալքությամբ մահացու վտանգի ենթարկելով:

3. Թահմասպ Բ-ի 6 հայ հարյուրապետերի 500-հոգանոց զորքը

Թահմասպ Բ-ի ընտիր «ղուլերի» զորագնդի կազմում հիշատակվում են նաև վեց ուրիշ հայ քրիստոնյա զորահրամանատարներ (*յուզբաշիներ*)՝ իրենց ենկակա 500-հոգանոց զորքով: «Ղուլերը» Սեֆյան շահերի անձնական գվարդիայի մարտիկներն էին, որոնք գրեթե բացառապես հավաքագրվում էին քրիստոնյաներից՝ հայերից ու վրացիներից[11]: Սովորաբար, ղուլերը ենթարկվում էին կրոնափոխության՝ մահմեդականացվում էին: Բայց, ինչպես երևում է հետևյալ հաղորդումից, XVIII դարի առաջին երեսնամյակում ու հատկապես 1720-ական թթ. Իրանում տիրող արտակարգ ծանր պատերազմական իրավիճակում այդ կանոնը չի պահպանվել.

> «Պարսից զորքում կար 6 քրիստոնյա *յուզբաշի* (=հարյուրապետ), որոնք Թահմազի ղուլերից էին: Մեկը Դավին էր, իսկական անունը՝ Դավիթ: Մյուսին Գորիցեցի բեկ են կոչում: Երրորդին կոչում են Գեղաքունիի կամ Գեղայքունիի *դուն* (՞), նա Սոթ գյուղից է, սոթեցի Ատոմի որդին է, անունը՝ Աբիջան: [Չորրորդը]՝ չափնեցի Այդին-բեկի որդի Աղաջանն է: [Հինգերորդը]՝ չափնեցի Մռավենց Տեր-Մովսեսի որդի Բալիգն է: [Վեցերորդը]՝ Ճաթայկերենց Թոբուզի որդի Հախնազարն է: Այս 6 քրիստոնյաների զորքում կա 500 զինվոր, և ոչ ավելին»:
>
> *[«Պարսոյ զօրի մէջումն կէր Զ [6] քրիստոնայ, որ Թահմազին ղուլ են կամ իւզբաշի. որ մին էր Դավի, անունըն Դաւիթ կոչի. մինն՝ Գօրցիցեցի բէկ կասեն. մինը՝ Գեղաքունու դուն կասեն, որ անվանի Գեղայքունի, Գեղաքունի չորս կողմէն կասեն, զեղն Սոթ անվանի, այս սոթեցի Ատումի որդի Աբիջանս, չաբնեցի Այտդէն բէկի որդի Աղայջանըն, եւ չաբնեցի Մռավենց Տէր Մուսէսի որդի Բալիգն, եւ ճաթայկերենց թօբուզի որդի Հախնազարս: Վերջայպէս էս Զ [6] քրիստոնէս ունի ԵՃ [500] զօրք, ոչ ուն յառայվել»*] [**1**, էջ 75][12]:

Այս վեց հայ հարյուրապետերը ևս 1724 թ. Թավրիզի ճակատամարտի շատ հավանական մասնակիցներից են՝ իրենց, ըստ ամենայնի, հիմնականում հայերից բաղկացած հարյուրակների հետ միասին: Ընդ որում, նրանցից մեկը ծնունդով Վրաստանի Գորի քաղաքից էր, երկուսը՝ Ղափանի Չափնի (Չաբնի) գյուղից, ևս մեկը՝ պատմական Գեղարքունիքի Սոթք գյուղից: Այսինքն՝ գոնե վերջին երեք հրամանատարները կարող էին կապանցի-սյունեցի համարվել, ինչը նույնպես, հնարավոր է, նպաստել է նրան, որ Կրուշինսկին Թավրիզի ճակատամարտին մասնակցած հայերին կապանցի անվանի:

Աբրահամ Երևանցին մեկ ուրիշ դրվագում հարյուրապետ Դավիին կոչում է Դավիթ-բեկ (չշփոթել 1722-1728 թթ. Սյունյաց առաջնորդի հետ)՝ պատմելով, թե նա ինչպես է մի գիշերով գաղտնի այցելել շահ Թահմասպ Բ-ին ու նախազգուշացրել նրան Թահմասպ-կուլի խանի (ապագա Նադիր շահի) նենգ մտադրությունների մասին [**1**, էջ 64]: Այս ուշագրավ հաղորդումը վկայում է այն մասին, որ հարյուրապետ Դավին (Դավիթ-բեկը) եղել է Թահմասպ Բ-ի վստահելի մերձավոր անձանցից մեկը:

4. Դիզակի մելիք Եգանի զորքը

1723 թ. օգոստոսի 17-ին շարադրված մի պատմական վավերագրում մատնանշված է շահ Թահմասպ Բ-ի դրական վերաբերմունքը Ղարաբաղի հայոց զորքի հանդեպ[13].

> «Շահի (իմա՝ շահ Սուլթան-Հուսեյնի, 1694–1722) որդին (Թահմասպ Բ-ն) բարեկամաբար է գրում դեպի [Ղարաբաղի] Հայոց զորքը՝ հրամայելով, թե՝ «Ամբողջ ուժով կռվեք Դաւուդ-բեկի լեզգիական զորքի դեմ, միայն թե իմ զորքերին վնաս մի տվեք»:
>
> [*«А сын шахов… пишет де ко армянскому войску з дружелюбием и*

[11] Ղուլերի զորաբանակի թվաքանակը տատանվել է 10-30 հազարի միջև (տե՛ս, օրինակ, [**11**, էջեր 191, 391]):

[12] Աբրահամ Երևանցու պատմության «խմբագիր օրինակը» պատրաստած Մատթեոս Եվդոկիացին չի հասկացել «ղուլ» ռազմական եզրույթի իմաստը՝ սխալմամբ կարծելով, թե խոսքը վերաբերում է «Ղուլի խանին» [**1**, էջ 154], այն է՝ Թահմասպ Ղուլի խանին, ով հետագայում՝ 1736-1747 թթ., կառավարեց Իրանը որպես ահարկու Նադիր շահ:

[13] 1723 թ. օսմանյան բանակների Իրան ներխուժելուց հետո վտարանդի շահ Թահմասպ Բ-ն ուղղակիորեն խրախուսում էր հայերի և շիա մահմեդականների միջև հակաօսմանյան դաշինքը, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա մահմեդական դաշնակից-հետևորդները՝ մասնավորապես, Նախիջևանի խանն ու Բարգուշատի սուլթանը, կատաղի պատերազմ էին վարում Սյունյաց հայոց ուժերի դեմ: Օրինակ, 1723 թ., ինչպես նաև 1724 թ. գարնանն ու ամառվա ամիսներին Թահմասպի վերաբերմունքը Դավիթ-բեկի իշխանապետությանը գերազանցապես թշնամական էր՝ Մեղրիի հայերի հետ 1724 թ. ամռանը հաշտություն կնքելու փորձը չհաշված (տե՛ս [**3**, էջեր 102-113]):

повелевает ежели де сколько вашей мочи будет, то побейте лезгинцов Даудбеково войско, только де моего войска людей не трогайте»] [**18**, վավ. 188, էջ 44].

Վերլուծելով 1723 թ. Այսրկովկասի վիճակը և հայ զինվորության մեջ առաջին տեղ հատկացնելով Դիզակի մելիք Եգանին՝ Նադիր շահի (1736-1747) պալատական պատմիչ Մուհամմադ-Քյազիմն արձանագրում էր, որ այդ ժամանակ հայկական զորքերն իրենց իշխանությունը տարածել էին մինչև Կուր և Արաքս [**14**, էջ 76]: Հայտնի է նաև, որ Եգանին պաշտոնապես Դիզակի մելիք է նշանակել ոչ այլ ոք, քան շահ Թահմասպ Բ-ն [**15**, էջեր 76-77]:

Նկատի ունենալով, որ առնվազն 1723 թ. ի վեր Կուրի ափը հյուսիսից վերահսկում էր հենց Դիզակի հայոց զինուժը (Մեղրիի հատվածը չհաշված), ինչպես նաև Թավրիզին Ղարաբաղի Հայոց Սղնախներից հենց Դիզակի սղնախի ամենամոտ գտնվելը՝ տեղին կլինի ենթադրել, որ մելիք Եգանի հրամանատարությամբ մի զորամաս նույնպես կարող էր մասնակցություն բերել Թավրիզի 1724 թ. պաշտպանությանը: Այդ դեպքում շատ հավանական կլիներ, որ մելիք Եգանի գլխավորած զորքը գործեր Սղնախներից շահ Թահմասպ Բ-ի մոտ ուղարկված վերոհիշյալ Փիլիբեկ Բասաուրովի զորախմբի հետ համատեղ՝ հայկական մի խոշոր համահավաք զորագնդի կազմում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Աբրահամ Երևանցի.** Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի: Յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանօթագրութիւններ, պատրաստեց Սահակ վրդ. Ճեմճեմեան: – Վենետիկ-Ս. Ղազար, 1977:
2. **Այվազյան Ա. Մ.** 1720-ական թթ. Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից. – ՊԲՀ, 1990, № 2, էջ 119-134:
3. **Այվազյան Ա. Մ.** Իրադարձությունները Ղափանում և Նախիջևանի խանությունում 1724 թ.. – Պատմա-բանասիրական հանդես, 1991, № 2, էջ 102-114:
4. **Այվազյան Ա. Մ.** Դավիթ-բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները. – ՊԲՀ, 1990, №3, էջ 76-85:
5. **Այվազյան Արմեն.** Արևելահայության ժողովրդագրությունը XVII–XVIII դարերում և հայոց զորքի թվակազմը 1720-ական թվականներին: – Եր.: «ՆՏ Հոլդինգ», 2022:
6. Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», աշխատասիրեց **Սամուել վրդ. Արամյան**: – Վենետիկ-Ս. Ղազար, 1978:
7. Եղիա Կարնեցու դիվանը: Առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Գ. Աբրահամյանի: – Եր.: «Միտք» հրատ., 1968:
8. **Եսայի Հասան-Ջալալեան**. Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի: – Երուսաղէմ, 1868:
9. **Զուլալյան Մանվել**. Արևմտյան Հայաստանը XVI–XVIII դդ.: – Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980:
10. **Հովհաննիսյան Ա. Գ.** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. Գիրք երկրորդ: – Եր.: ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959:
11. «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը». Կալվածագրեր: Պրակ Ա (ԺԴ-ԺԶ դդ.): Աշխ.՝ Հ. Դ. Փափազյան: Եր., 1968:
12. **Չորանյան**, **Պավել**. Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին: – Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981:
13. **Չորանյան**, **Պավել.** Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին: Ս. Էջմիածին, 2006:
14. **Փափազյան Հակոբ**. Հայ-իրանական զինակցությունը 1726-1736 և Արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր-շահի օրոք. – Բանբեր Երևանի համալսարանի, 1972, № 2, էջ 72-85.
15. **Փափազյան Հակոբ**. Մելիք Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը. – Լրաբեր հասարակական գիտությունների, 1985, № 5, էջ 75-78:
16. АВПР, Ф. Сношения России с Грузией, 1726 г., д. № 1, лл. 226-227.
17. ЦГВИА СССР (այժմ՝ РГВИА), ф. 13, оп. 1/107, д. 106, лл. 962-963.
18. Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, часть II, под ред. Аш. Иоаннисяна. // Ереван: Изд. АН Арм. ССР, 1967.
19. Армянское войско в XVIII веке. Из истории армяно-русского военного содружества (исследование и документы). Подготовил к изданию А. Н. Хачатрян. – Ереван: изд-во АН Арм. ССР, 1968.
20. **Мандзяк Алексей**. Воины ислама: Воинские и боевые искусства мусульманских народов. – Минск: «Книжный дом», 2007.
21. **Пайчадзе Г. Г.** Русско-грузинские политические отношения в первой половине XVIII в. – Тбилиси, 1970.
22. **Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси**. Шараф-наме. – Перев., предисл., примеч. и прилож. Е. И. Васильевой. – М.: «Наука», 1976.
23. **Clairac, Louis André de La Mamie de**. Histoire de Perse, depuis le commencement de ce siècle. T. II. – Paris, 1750.
24. **De Sagredo**. Histoire de l'Empire Ottoman. Trad. de l'Ital., T. VII. – Paris, 1732.
25. **Krusinski [Judasz Tadeusz].** The History of the Late Revolutions of Persia. Vol. II. 2nd edn. – London, 1740.
26. **Lockhart, Laurence**. The Fall of the Safavi Dynasty and the Afghan Occupation of Persia. – London: Cambridge University Press, 1958.
27. **Otter [Jean].** Voyage en Turquie et en Perse: avec une relation des expéditions de Tahmas Kouli-Khan. T. II. – Paris, 1748.

Сдана/Հանձնվել է՝ 03.06.2024
Рецензирована/Գրախոսվել է՝ 10.06.2024
Принята/Ընդունվել է՝ 17.06.2024